ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հոկտեմբերի 2015 թվականի թիվ N 193 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ <<ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ>> ԾՐԱԳՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ << ՄԱՐԶԻ ՆՇԱՆԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԵԾԱՐՄԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ >> ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի պահանջներով, 2015թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով <<Մշակութային միջոցառումների իրականացում>> ծրագրով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին <<Մարզի նշանավոր գործիչների մեծարմանը նվիրված միջոցառումներ>> միջոցառման կազմակերպման նպատակով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. 2015թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով <<Մշակութային միջոցառումների իրականացում>> ծրագրով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին նախատեսված միջոցներից 400.0 հազ. դրամ գումարն ուղղել << Մարզի նշանավոր գործիչների մեծարմանը նվիրված միջոցառումներ >> միջոցառման կազմակերպմանը:

2. Հանձնարարել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Կ. Նազարյանին <<Մարզի նշանավոր գործիչների մեծարմանը նվիրված միջոցառումներ>> միջոցառումը կազմակերպել << Տավուշի մարզպետի կողմից հաստատված ծրագրին համապատասխան:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Կ. Նազարյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

ք. Իջևան
12 հոկտեմբերի 2015թ.